ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՄՊԸ

ՃԱՆԱՉԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑԸ...

Արդյոք մեր հույսը մեզ վրա է, թե՞ փափագում ենք Նրա Հոգուն

15 Մովսեսը բարձրացավ լեռը, և <u>ամպը</u> ծածկեց լեռը: 16 Տիրոջ փառքը կանգնեց Սինա լեռան վրա, և <u>ամպը</u> այն ծածկեց վեց օր: Յոթերորդ օրը Տերն <u>ամպի</u> միջից կանչեց Մովսեսին: 17 Տիրոջ փառքի տեսիլքը լափող կրակի պես էր լեռան գագաթին, Իսրայելի որդիների աչքի առաջ: 18 Մովսեսը մտավ <u>ամպի</u> մեջ ու բարձրացավ լեռը: Մովսեսը լեռան վրա մնաց քառասուն օր և քառասուն գիշեր: Ելից 24:15-18

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԵԼԻՑ 33:7-11

7 Մովսեսը վերցրեց վրանը և այն կանգնեցրեց բանակատեղիից դուրս՝ բանակատեղիից հեռու, և այն կոչեց ժողովի վրան: Ամեն ոք, ով փնտրում էր Տիրոջը, գնում էր դեպի ժողովի վրանը, որը բանակատեղիից դուրս էր գտնվում: 8 Երբ Մովսեսը դեպի վրանն էր գնում, ամբողջ ժողովուրդը վեր էր կենում, և ամեն մեկը, իր վրանի մուտքին կանգնած, նայում էր Մովսեսի ետևից, մինչև որ նա մտնում էր վրանը: 9 Հենց որ Մովսեսը վրան էր մտնում, <u>ամպի սյունն իջնում ու կանգնում էր վրանի մուտքի մոտ</u>, և Տերը խոսում էր Մովսեսի հետ: 10 Ամբողջ ժողովուրդը տեսնում էր <u>ամպի սյունը</u> վրանի դռան մոտ կանգնած. և ամբողջ ժողովուրդը վեր էր կենում, ու ամեն մեկը երկրպագություն էր անում իր վրանի դռան մոտ: 11 Տերը Մովսեսի հետ խոսում էր դեմառդեմ, ինչպես մի մարդ կխոսեր իր բարեկամի հետ: Ապա Մովսեսը վերադառնում էր բանակատեղի, բայց նրա ծառան՝ Նավեի որդի պատանի Հեսուն, վրանից դուրս չէր գալիս:

18 Մովսեսն ասաց. «Աղաչում եմ, ցո՛ւյց տուր ինձ քո փառքը»:

1. ԹՈ՛Ղ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳԱ:

Ել. 33:14-15 - 14 Եւ նա ասեց. Իմ ներկայությունը (երեսը) պիտի գնա քո առջևից, եւ ես քեզ <u>կհանգստացնեմ</u>: 15 Եւ Մովսէսն ասեց նորան. Եթէ քո ներկայությունը (երեսը) մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի հանիր:

2. ԹՈ՛Ղ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԼՑՆԻ ՏՈՒՆԸ:

Ելից 40:33-35 – 33 Մովսեսն ավարտեց ամբողջ գործը: 34 Եվ մի ամպ ծածկեց ժողովի վրանը, և վրանը լցվեց Տիրոջ փառքով: 35 Մովսեսը չէր կարողանում մտնել ժողովի վրանը, որովհետև ամպը ծածկել էր այն, և Տիրոջ փառքը լցրել էր խորանը:

- ***Տիրոջ ներկայության ամպը իջնում է երկրպագության ժամանակ:***

  Բ Մնացորդաց 5:13-14 – 13 Եվ երբ փող հնչեցնողներն ու երգողները, մէկ ձայն էր լսվում Տիրոջը օրհնելիս եւ գովելիս. փողերի, ծնծղաների և նվագարանների նվագակցությամբ սկսեցին օրհնել Տիրոջը՝ ասելով. Քանզի բարի է նա, քանզի հավիտյան է նրա ողորմածությունը, այն ժամանակ Տիրոջ տունը լցվեց ամպով, 14 և քահանաները ամպի պատճառով չկարողացան կանգնել պաշտամունք կատարելու, որովհետև Տիրոջ փառքը լցրել էր Աստծու տունը:

3. ԹՈ՛Ղ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԵՐ ԿՅԱՆՔ:

Ելից 40:36-38 – 36 Երբ ամպը վերանում էր վրանի վրայից, Իսրայելի որդիները չվում էին իրենց բոլոր ճամփորդությունների ընթացքում: 37 Իսկ երբ ամպը չէր վերանում, չէին չվում մինչև նրա վերանալու օրը: 38 Որովհետև Տիրոջ ամպը ցերեկը վրանի վրա էր լինում, իսկ գիշերը դրա վրա կրակ էր լինում Իսրայելի ամբողջ ժողովրդի առաջ՝ նրանց բոլոր ճամփորդությունների ընթացքում:

- *Ամպերով Հիսուսը համբարձվեց երկինք (Գործք Առաքելոց 1:9), և ամպերով Նա պիտի վերադառնա (Մարկոս 13:26):*

- *Ամպը ներկայացնում է Սուրբ Հոգու առաջնորդությունն ու փառահեղ ներկայությունը ձեր կյանքում:*

- *Նա շրջապատում է քեզ և բացահայտում Աստծո փառքը:*

ԿԱ ԵՐԿՈՒ ԻՐԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՄՊԸ ԽԱԹԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Գործք Առաքելոց 19:1-2 – Պողոսը նրանց հարցրեց. «Երբ հավատացիք, Սուրբ Հոգին ընդունեցի՞ք»: Նրան պատասխանեցին. «Մենք չենք էլ լսել, որ Սուրբ Հոգի կա»:

Գաղատացս 3:3 – Այդքան անմի՞տ եք. Հոգով սկսեցիք ու հիմա մարմնո՞վ եք ավարտում:

Ինչու մենք պետք է փափագենք Նրա Հոգուն...

- ***Մենք ունենք հանձնարարություն, որը չենք կարող կատարել:***

  Մովսեսն ասաց Տիրոջը. Ես օգնության կարիք ունեմ, և ես ինքս չեմ կարող դա անել:

- ***Մենք ունենք արտոնություն, որը չենք կարող անտեսել:***

  *Ա Կոր. 6:15, 19 – **15** Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են. ուրեմն Քրիստոսի անդամները վերցնեմ պոռնիկի՞ անդամ անեմ: Քա՛վ լիցի: **19** Կամ չգիտե՞ք, որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, և որն Աստծուց ունեք, և դուք ձերը չեք:*

- ***Տիրոջ փառքի ամպը կարող է փոքր սկիզբ ունենալ:***

  Գ Թագ. 18:44 – Եվ յոթերորդ անգամ ասաց. Ահա մարդու ձեռքի չափ մի փոքր ամպ է բարձրանում ծովից: Եվ Եղիան ասաց. Գնա ասա՛ Աքաաբին. Լծի՛ր կառքդ և իջի՛ր, որ անձրևը չբռնի քեզ:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: